## ԺԱՄԱՆԱԿԱԳՐԱԿԱՆՔ

Ամենապատիւ Պատրիարք Հայրը, որ Աթոռոյս ծանր հոգացողութեան հետ միասին մեծ խնամք ունի նմանապէս քաղաքիս հայազգի ժողովրդեան վըրայ. թէ իւր քարոզներուն մէջ և թէ առանձին շնորհօք կը յորդորէր ժողովրդականքը, որպէս զի աշխատին ոչ միայն բարեպաշտ, այլ և նիւթապէս իրարու աջակցիլ. իրարու օգնել և իրենց վիճակը բարւոքել. Ուրախ ենք որ Սրբազան Հօր պատուէրները արդէն սկսած են արդիւնաւորիլ ոչ միայն արական այլ և իգական սեռին մէջ. և մենք բերկրութեամբ պիտի կը հրատարակենք ահա [illegible] ժողովրդոյս այս նոր և յուսալից շարժումը. Ամսոյս մէջ քաղաքիս հայազգի պատանիները միանալով հաստատեցին խնայողական Ընկերութիւն, որոյ նպատակն է բարեկարգ ապրուստեամբ դրամական նպաստաւոր գումար կազմել և նոյնը շահեցնելով պատահան ընկերական շահաւէտ գործառնութիւններ կատարել. Պատանիներուն հետեւեցան իսկոյն հասակաւոր մարդկանց դասը, նոյնօրինակ ընկերութիւն մը կազմելով. աւելի ընդարձակ նպատակներու համար. Բայց աւելի ուրախալին է, որ օրիորդք և տիկնայք եւս արական սեռի նախանձելի շարժումէն ոգեւորելով առանձին ընկերութիւն հաստատեցին իրենց մէջ շռայլութենէ զգուշանալ և խնայողական արկղ մի ունենալ իրենց սեռին վերաբերեալ հասարակային պիտոյքները հոգալու. Այս նորահաստատ ընկերութեանց պայմանագրերը և կանոնքը կնքեց Ս. Հայրը և յորդորեց ամէն անդամները անխափան շարունակել. Արդարեւ՝ վերջին քանի մի տարիներու մէջ բազմաթիւ ընկերութիւններ հաստատեցան և խափանուեցան յանկարծ և 'ի նախատեսին վախճանին անհասանելի. Սակայն մենք քաջայոյս ենք, որ քաղաքիս նորահաստատ ընկերութիւնները, այլոց փորձէն օգուտ քաղելով և ամէն տեսակ անխոհեմութենէ զգուշանալով կ'աշխատին հաստատուն մնալ իրենց օգտաւէտ ձեռնարկութեան մէջ 'ի պատիւ իրենց անուան և յօրինակ բարեաց.

Երբ տեսնենք ներկայ ընկերութեանց յառաջադիմութիւնք և միաբանական հաստատամտութիւնք՝ կը խոստանանք և մենք աւելի անգամ աւելի ընդարձակ խօսել այս նիւթին վրայ և միանգամայն հրատարակել իրենց պայմանագիրը և կանոնքը Սիօնի մէջ 'ի փրկութիւն ազգայնոց.

---

## ՑԱՆԿ ՆԻՒԹՈՑ

### ՅՈՒՆՈՒԱՐ

ՆՈՐ ՏԱՐԻ 1
Ճշմարտութիւն և ստութիւն. (շարունակելի). 4
Սուրբն և չարասիրտ. 9
Վերադարձ 'ի Պաւհիրէէ Ամեն. Սրբ. Պատրիարք Հօր, և ուղերձք աշակերտաց. 13—17

### ԿՐՕՆԱԿԱՆՔ

— Գիտողութիւն Լուսաւորչական. Հայ—Գրիգորեան և Էջմիածնական բառերու վրայ. 17

### ԺԱՄԱՆԱԿԱԳՐԱԿԱՆՔ

Օծնեան հանդէս. Հրաման Յոպպէու, Դամասկոսի, և Երիքովի. —Նորկրաշարժ. —Պ. Պէտէրմանն Հիւպատոս Պրուսիոյ. —Ոբբահօր. —Մահացյժ. —Նուխիատուք. —Օտանուցում. 17—24

### ՓԵՏՐՈՒԱՐ

Ճշմարտութիւն և ստութիւն (Շարունակութիւն և վերջ) 25
Հանդէս պարգեւաբաշխութեան Ժառանգաւորաց ուսումնարանի 31
Շնորհակալութիւն Պ. Գ. Մուրատեանի. 33
Ուղերձ յՕծման Վեհ. Հայրապետի. 41
Նամակ 'ի Պաւհիրէէ 41
Բարդյական տօնակ. 44
Պեռլինի նամակ. (Շարունակելի). 45

### ԺԱՄԱՆԱԿԱԳՐԱԿԱՆՔ

Գեր. Տ. Տ. Իգնատիոս և Միմէօն Ս. Եպիսկոպոսաց Ընդհանրական հանդէսին. — Կարգի առաջնորդ. Գեր. Տ. Յովհաննէս Ս. Եպիսկոպոս. — Դժբաղդ մահ. — Բրուսիացւոց բարերարութիւնը. — Վերկայ ամսոյ ցուրտը. — Զանազան գողութիւնք. — Կիլիկիոյ վիճակէն լուրեր. 46—48

### ՄԱՐՏ

Ազդ 49
Յառաջադիմութիւն 49
Երդումն Գեր. Հատտենի. — Գիտակցութիւն. — Քանի մի խօսք առ Հայ-Հռովմէական ազգայինս 54
Պեռլինի Նամակ. (շարունակութիւն և վերջ) 61
Իսաւրի խաչն 63